

ՀՈՒԼԻՍ 2020

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ






1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ	9
2. Առևտրային տնօրինություններ	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Երավարանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	16
3. Տեխնիկական տնօրինություն	17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	20
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	22
3.4. Ջրատար համակարգի բարելավում	23
3.5. Գոտիավորման աշխատանքներ	24
4. Լրատվական ծառայություն	28
5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	30
5.1. Փաստաթղթերի մշակում	31
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	31
5.3. Բուժզգնում	32
5.4. Դասընթացներ /սեմինարներ	32
5.5. Անվտանգության ստուգայցեր	33
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	34
6.1. Համակարգային ցանց	35
6.2. Բնտերակտիվ համակարգ	35

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քաղաք Երևան, Կենտրոն վարչական շրջան

● «Արևելք» ՍՏ «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Նորք Մարաշ 13 փողոցը սնող $d=50$ մմ պողպատե ջրագիծը ենթարկվել էր կոռոզիայի և գտնվում էր խիստ վթարային վիճակում: Կոռոզիայի հետևանքով շարքից դուրս էր եկել նաև թվով 7 բաժանորդների մուտքագծերը: «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է նոր պոլիէթիլենային խողովակներով ջրագիծ $d=75$ մմ և $d=63$ մմ $L=250$ գծ/մ երկարությամբ: Նոր $d=25$ մմ $L=30$ գծ/մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով միացվել են թվով 7 բաժանորդների մուտքագծերը, բաժանորդի սեփականություն հանդիսացող տարածքից դուրս տեղադրվել են ջրաչափական դիտահորեր և փոխարինվել է թվով 8 ջրաչափական հանգույց: Ջրագծի փոխարինման արդյունքում բարելավվել է ջրամատակարարման որակը:



● «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում իրականացված վթարադրոնողական աշխատանքների շրջանակներում Ռոստոմ և Նար Դոսի փողոցների խաչմերուկում դիտահորի մեջ, հայտնաբերվել և $d=150$ մմ խողովակի խցափակման միջոցով վերացվել է վթար, որի արդյունքում տնտեսվել է մոտ $Q=15$ լ/վրկ ջրաքանակ:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից սպասարկման տարածքում գտնվող Նորք Մարաշ 13 փողոց 59 տան մոտ Մարաշ ՕԿՁ-ից իջնող $D=400$ մմ ջրատարի վրա, իրականացվել են $D=400$ մմ հոսքաչափի տեղադրման, $D=300$ մմ ճնշման կարգավորիչ փականի և $D=50$ մմ օդահեռ փականի վերատեղադրման աշխատանքներ, ինչի արդյունքում բարելավվել և կարգավորվել է Նորք Մարաշ 13 փողոցի ջրամատակարարումը:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Զավարյան փողոց 57/19 հասցեում կառուցվել է $D=100$ մմ $L=80$ մետր երկարությամբ ջրագիծ, իրականացվել է թվով 5 բաժանորդի ջրաչափական հանգույցների տեղափոխում սեփականություն հանդիսացող տարածքից դուրս տեղադրված ջրաչափական դիտահորերում: Իրականացված աշխատանքների արդյունքում տնտեսվել է մոտ $Q=3$ լ/վրկ

● «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակում Տերյան փողոց 127 հասցեում հայտնաբերվել և D=150մմ թուջե խողովակի կարանահայման միջոցով վերացվել է գաղտնի վթար, ինչի արդյունքում տնտեսվել է մոտ Q=20լ/վրկ ջրաքանակ:



● **Քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջան**

«Էրեբունի» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Նուբարաշեն 7 փողոցի և հարևանությամբ գտնվող թոչնաբուծական ֆաբրիկայի ջրամատակարարումը իրականացվում էր հարակից ձորակով անցնող D=100մմ խիստ քայքայված պողպատե խողովակներով, և բնահողի հաճախակի հոսքերը առաջ էին բերում ջրագծի վթարներ, ինչը անհնարին է դարձնում վերջինիս բնականոն շահագործումը: Նոր ուղեգծով կառուցվել է D=75մմ L=180զմ/մ պոլիէթիլենային նոր ջրագիծ և շահագործումից հանվել է վթարված L=170զմ/մ հատվածը:

Հուլիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	333
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	18,078
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	15,260
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	1,942
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	5
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4004.3
Կառուցված ջրագիծ	մ	4494.5
Կառուցված կոյուղագիծ	մ	290
Վերացված գաղտնի վթարներ	հատ	34
Փոխարինված փական	հատ	27
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	544
Մաքրված դիտահոր	հատ	395
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	74.37
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	1330
Ջրահեռացման ցանցում	հատ	2732
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	577

Հուլիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	708	1009	473

1.2. ԶՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հուլիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	132	11	1	0	0	1	1	0	0	146
Փոխարինված	431	37	4	7	4	2	1	3	1	490
Տեղափոխված	7	1	0	2	0	0	0	0	0	10
Տեխ. ակտ	108	58	6	4	4	2	0	1	0	183
Ընդամենը	678	107	11	13	8	5	2	4	1	829

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 829 ջրաչափ: Կատարված աշխատանքների 81,79 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հուլիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	930	252	18
2	Մաշտոց	1980	253	18
3	Շահումյան	1690	181	10
4	Զեյթուն	1010	221	18
5	Շիրակ	1046	629	12
6	Ալավերդի	0	94	30
7	Ապարան	0	33	9
8	Արթիկ	1730	22	0
9	Աշոցք	0	13	0
10	Բերդ	0	4	0
11	Իջևան	700	27	16
12	Լոռի	3225	279	0
13	Նոյեմբերյան	220	26	0
14	Սպիտակ	500	36	0
15	Ստեփանավան	142	26	0
16	Թալին	0	17	0
17	Տաշիր	270	12	0
18	Էջմիածին	0	127	0
19	Չարենցավան	570	107	1
20	Աբովյան	2910	90	0
21	Հրազդան	3130	151	24
22	Աշտարակ	2690	26	11
23	Կենտրոն	1060	292	54
24	Հյուսիս	60	211	54
25	Հարավ	0	368	0
26	Էրեբունի	0	159	9
27	Արմավիր	0	116	0
28	Արտաշատ	0	95	0
29	Արարատ	825	81	0
30	Մասիս	0	45	6
31	Գավառ	835	25	0
32	Սևան	130	79	0
33	Մարտունի	0	20	0
34	Վարդենիս	0	17	0

35	Ճամբարակ	60	17	0
36	Դիլիջան	140	47	0
37	Վայք	0	21	0
38	Եղեգնաձոր	284	38	0
39	Ջերմուկ	0	20	0
40	Սիսիան	270	75	0
41	Գորիս	0	24	0
42	Կապան	60	67	0
43	Մեղրի	0	18	0
	Ընդամենը	26467	4461	290

1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

Սևանի N5 կոյուղու պոմպակայանի խոշոր մասնիկների հավաքման զամբյուղի հենարանները ամբողջովին քայքայվել էին, որի պատճառով անհնար էր դարձել շահագործել զամբյուղը: Խցանվել էին նաև հակադարձ փականները: Աշխատակիցների կողմից ամբողջությամբ փոխարինվել են զամբյուղի հենարանները, ապամոնտաժվել և մաքրվել են հակադարձ փականները:

Գավառի կեղտաջրերի մաքրման կայանում ավագորսիչից դատարկվել է ամբողջ կեղտաջուրը, ստուգվել է կոնվեյերի աշխատանքը, մաքրվել են օդամուղ խողովակների անցքերը և միացվել համակարգին:

Դիլիջանի կոյուղու մաքրման կայանում կոտրվել էին մանր ճաղավանդակի քերիչ սանրի ատամները, որոնք վերանորոգվել են և տեղադրվել:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	58,426	21,6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	87,723	25,2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	157,933	7
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	151,954	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	122,205	19,8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	17,892	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	13,544	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	26,900	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	10,600	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	6,680	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	123
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	18
Պոմպի տեղադրում	1

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հուլիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Արևելք» ՍՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների

պատշաճ շահագործման համար հուլիս

ամսվա ընթացքում նորոգվել

են թվով 2 մեքենաների

շարժիչները մասնակի և

ընդհանուր, փոխարինվել

են հանդարտիչներ, կայծա-

մուներ, ներդիրներ, հղկվել և

կարգավորվել են գլխիկները:

Թվով 4 մեքենաների

արգելակման համակարգերը

նորոգվել են, փոխարինվել

են արգելակման սալիկ-

ները, խողովակները, վակու-

ումները, սկավառակները և

ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորո-

գում է իրականացվել թվով 7

մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են

գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր,

հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր,

ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուտի

առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպա-

նակներ և հարվածամեղմիչներ, կարդանի

խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ,

կիսաառնիներ, խտաբուկեր, մանեկներ,

սատելիտներ:

Թվով 60 անվարդեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Փոխարինվել են թվով 49 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր,

արգելակման հեղուկ, քսայուղեր:

Նորոգվել է թվով 2 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները,

խտաբուկները և ներդիրները:

Թվով 7 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող

առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 6 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ, մխոցներ:

Վերանորոգվել են թվով 7 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուխ լարեր, ռելեններ, վառոցքի

բանալիներ:

Թվով 2 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և

բենդեքսները:

Թվով 1 էքսկավատորի համար նորոգվել է բարձր ճնշման մոլիչները:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 4 մեքենամեխանիզմների վրա:

Թվով 7 մեքենաների վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային

կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Մնուցման նորագում է իրականացվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են ժիգլորներ, ներդիրներ, ասեղներ,

բարձր ճնշման շտուգերներ, լիցքավորման հետադարձ փականներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման

ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը

նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

01.01.2020 թվականին ԵՏՍՍ-ում տեղամասերի թվին ավելացել է «Թալին» առևտրային տեղամասը՝ ընդհանուր թվով 2020 բաժանորդով, տեղափոխվել է ՄՏՍՍ-ից:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.08.2020թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 338,695, իսկ ՄՏՍՍ-ում՝ 174,945 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2019թ. հուլիսից - 2020թ. հուլիս ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	423,417	324,647	76,7
		Իրավաբանական անձ	20,160	14,048	69,7
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	211,964	168,382	79,4
		Իրավաբանական անձ	8,072	6,563	81,3
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	635,381	493,029	77.60
		Իրավաբանական անձ	28,232	20,611	73.01

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	467,183	393,352	84,2
		Իրավաբանական անձ	23,815	16,213	68,1
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	254,664	211,964	83,2
		Իրավաբանական անձ	10,185	8,072	79,3
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	721,847	605,316	83.86
		Իրավաբանական անձ	34,000	24,285	71.43

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 164 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 49 նոր բաժանորդ: ԵՏՍՍ տեղամասերում հուլիս ամսվա ընթացքում ծառայություններ ստացած բաժանորդների թիվը (այցելությունների թիվը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 35,623 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 9,5 տոկոս, իսկ ՄՏՍՍ տեղամասերում, չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 16,969 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 10 տոկոս:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՍ-ի և ՄՏՍՍ-ի «Լոռի», «Շիրակ», «Սևան» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և տեղափոխվում են բաժանորդների տարածքից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հուլիս ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 1601, իսկ ՄՏՍՍ-ում՝ 1705 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 07.2020
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	521	674	269	1464
		Իրավաբանական անձ	63	58	16	137
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	624	867	133	1624
		Իրավաբանական անձ	32	42	7	81
	Ընդամենը		1240	1641	425	3306

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: ԵՏՍՍ-ում հուլիս ամսվա ընթացքում փոխարինված 1,601 ջրաչափերի մոտ 63 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն, իսկ ՄՏՍՍ-ում փոխարինված 1705 ջրաչափերի մոտ 62 տոկոսը (կամ 1049 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել ԵՏՍՍ-ի մոտավ 174,988 մ³, իսկ ՄՏՍՍ-ի՝ 104,829 մ³ վերահաշվարկված հասույթ (62.54 % Երևան և 37.46 % մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2020թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



*Հասույթի տվյալներում 2019թ. ցուցանիշից հանված են ՄՏՍՏ-ից ԵՏՍՏ տեղափոխված թվով 5 տեղամասերի (Աբովյան, Ապարան, Էջմիածին, Մասիս և Թային) ցուցանիշները:

2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հուլիս ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1,447,532 մլն դրամ, իսկ ՄՏՍՏ-ում՝ 453,118 մլն ՀՀ դրամ: Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Հուլիս ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 42 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 8.9 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 8 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 595 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն: Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Հուլիս ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ներկայացված 10 000 000 ՀՀ դրամից բարձր բռնագանձման գործեր: Խոսքը վերաբերում է մասնավորապես հետևյալ ընկերություններին.

Հ/Հ	Պատասխանող	Հայցի առարկան /հայցապահանջը, հայցագիրը/, ՀՀ դրամ
1	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	14. 897. 386
2	Ազատաշեն համայնք	12. 511. 000
3	«Էլիտ Սերվիս» ՍՊԸ	11. 440. 944
4	«Նոր Հաճն» ՀՈԱԿ	114. 597.534
5	«Արտաշատի տրիկոտաժի Ֆաբրիկա» ԲԲԸ	14.009.047
	Ընդամենը	167.455.911

Առ այսօր պարտքերի մարման վերաբերյալ կնքված ժամանակացույցերի քանակը կազմում է 3387 հատ, իսկ պարտքերից ակնկալվող գումարը կազմում է 2. 680. 006. 883 ՀՀ դրամ:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2020թ		Բավարարված		Մերժված		2017-2020թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10310	1189686302	6221	634765698	113	16650789	3370	588293778	3607	309203248

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 60,34 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1,10 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.08.2020թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում ապրիլ ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	4,820.7	1,600.9
Բնակիչ-բաժանորդներ	3,569.1	1,092.3
Իրավաբանական անձեր	1,251.6	508.6
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	2,006.5	527.2
Բնակիչ-բաժանորդներ	1,539.9	407.9
Իրավաբանական անձեր	466.6	119.3
Ընդամենը, այդ թվում	6,827.2	2,128.1
Բնակիչ-բաժանորդներ	5,109	1,500.2
Իրավաբանական անձեր	1,718.2	627.9


Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 205.3 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2020 թ.դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.08.2020թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	453,911	392,324	86.4	23,134	16,204	70.0
	Առանց ջրաչափի	13,272	1,028	7.7	681	9	1.3
Մարզեր	Ջրաչափով	232,009	183,197	78.96	9,708	6,606	68.05
	Առանց ջրաչափի	21,108	1,172	5.55	240	4	1.67
Ընդամենը	Ջրաչափով	685,920	575,521	83.90	32,842	22,810	69.45
	Առանց ջրաչափի	34,380	2,200	6.40	921	12	1.30

Տվյալների բազայում 01.08.2020թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	592,971	301,288	50.81	25,987	7,573	29.14
Մարզեր	264,991	74,613	28.16	10,835	2,081	19.21
Ընդամենը	857,962	375,901	43.81	36,822	9,654	26.22

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2414, իսկ մարզերում՝ 1747 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 157, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 148 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2299	1867	81.2
գ.Պռոշյան	1542	1015	65.8
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5807	1757	30.3

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարակային իրավիճակին, հուլիս ամսին ջրաչափերի փոխարինման որոշակի աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 7,006, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4,552, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 826, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,311, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 784, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1123 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1013 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	233	104,312	17,172,634
Մարզեր	108	34,582	5,585,353
Ընդամենը	341	138,894	22,757,987

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի հուլիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.1%, ինչը նույնն է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն





Մարզերում այդ ցուցանիշը կազմել է 82%, որը 2.2%-ով ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:





Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են 26 ՃԿՊ-ներ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Շահումյան տեղամասի Արգավանդ գյուղի ՃԿՓ-ի կարգաբերման արդյունքում ջրաքանակը նվազել է մոտ 15 լ/վ-ով:



Հաշվետու ամսվա ընթացքում գտնիներում ջրաքանակների ուսումնասիրության և հոսակո-րուստների հայտնաբերման համար թվով 10 հասցեներում տեղադրվել են Seba UDM-200 տիպի հոսքաչափեր: Ստորև ներկայացված է տեղադրված հոսքաչափերի հասցեները և գրաֆիկական պատկերները:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արգնի 1, Արգական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2020թ-ի հուլիս ամսին 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 157 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 189 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 21287 ԿՎտ.ժ. (4,22%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 102 հասցե: Թվով 1 հասցեում հայտնաբերվել է հավելագրում, որը ճշտագրվել է ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից:

- Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 325,76 ԿՎտ.ժ կամ 1.4 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին




Կատարված աշխատանքներ

Թվով 184 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 74 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում

Մեկ հասցեում թվով 25 պնևմատիկ համակարգեր փոխարինվել են ինվերտորային համակարգով, էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 5243,12 ԿՎտ/ժամ (22%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա



Հաշվետու ժամանակահատվածում 49 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● Հուլիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 13,303 ԿՎտ.ժ կամ 0,41% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 175,458 ԿՎտ.ժ կամ 6,13%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 188,714 ԿՎտ.ժ կամ 2,58 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպասած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են հուլիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Ֆիզիկական բաժանորդների տեղադիրքերի ճշտում	հատ	155
Իրավաբանական բաժանորդների տեղադիրքերի ճշտում	հատ	184
Ֆիզիկական բաժանորդների նոր կետերի ավելացում	հատ	232
Իրավաբանական բաժանորդների նոր կետերի ավելացում	հատ	166
Արարատի մարզի ցրագծերի թվայնացում և մուտքագրում ԱՏՀ բազա	հատ	1
Կոտայքի մարզի գյուղերի և ջրագծերի թվայնացում	հատ	3
Կոյուղագծերի վթարների թվայնացում	հատ	18
Երևան քաղաքի բակային պոմպերի ԱՏՀ տվյալների թարմացում	հատ	1
Պլանային ջրանջատում	հատ	4
Վթարային ջրանջատումներ	հատ	4
Աշխատանքային թեմատիկ քարտեզների պատրաստում	հատ	19
Arc Reader քարտեզների փաթեթների պատրաստում Շահումյան և Արաբկիր տեղամասերի համար	հատ	2
Դիտակ և Ջրաշեն գյուղերի ջրագծերի թվայնացում	հատ	2
Արբիլյան քաղաքի համայնքների կատարողական գծագրերից տեղափոխում ԱՏ համակարգ	հատ	3
Երևան քաղաքի համար ջրագծերի և փականների թարմացում /աշխատանքների իրականացում Շահումյան տեղամասում/	հատ	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	31
Շենգավիթ համայնքի կոյուղագծերի թվայնացում	մետր	60542.04
Վաղարշապատ քաղաքի կոյուղագծերի թվայնացում	մետր	53753.545
Արագածոտն մարզի գյուղերի թվայնացում	գյուղ	2
Հյուսիս տեղամասի ջրատարների միացումների ուղղում, ստուգում և նախնական տեղամասերի բաշխում	հատ	1
Շենգավիթ տեղամասի ջրատարների և ՕԿՁ-ների միացումների իրականացում, Շենգավիթ ներքին ցանցի հետ միացումների ուղղում և ստուգում	հատ	1
Տեղամասերի նախնական բաշխում ըստ մեծ DMA-ների	հատ	1
Հյուսիս տեղամասի առանձնացում	հատ	1
Loadbuilder-ի միջոցով էլքերի բաշխում՝ ըստ բաժանորդների միջին ամսական և միջին օրական էլքի ամենամոտիկ հանգույցային կետերին	հատ	1
«Ակտիվների կառավարման» տվյալների բազայի ստեղծման համար համապատասխան ընթացակարգերի մշակում	հատ	1
Հիմնական ընթացակարգերի թարգմանություն բուլղարերենից հայերեն	հատ	4

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

Արզնի 1

Ընթացիկ ամսում փոխարինվել է նախկինում սողանքի հետևանքով վթարված $D=900$ մմ, $L=4$ մ ջրատարի թուջե հատված, որն իրականացվել է շինարարի ուժերով, իսկ մի հատվածը՝ Արաբկիր տեղամասի: Այդ հատվածը նախկինում փասսվել էր ու վերանորոգվել էր, սակայն ուներ արտահոսք: Օգտվելով Արզնի 1 ջրատարի կանգառից տեղադրվել են 3 հատ $D=50$ մմ օդահեռ փականներ, որի արդյունքում ջրատարի ջրաքանակը շատ արագ վերականգնվել է:



Հաշվետու ամսվա ընթացքում նաև կատարվել են ջրատարների ջրաքանակների չափումներ և ջրաքանակի կարգավորման աշխատանքներ:

«Նոյեմբերյան» ՇՏ

«Նոյեմբերյան» ՇՏ-ի հետ համատեղ կատարվել են վթարավերականգնողական աշխատանքներ Գիծ սարի ջրատարի վրա, որի արդյունքում քաղաք Նոյեմբերյան հասնող ջրաքանակն ավելացել է 7լ/վ-ով:



3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Ղարսի խճուղում ՎԶԵԲ ֆինասաբորմամբ իրականացվող փողոցաշինական ծրագրի շրջանակներում հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է հին թուջե D=300մմ խողովակ, որը նախկինում եղել է խցափակված: Առկա էր ջրի մոտ 0,5 լ/վ արտահոսք, ինչը խանգարում էր շին. աշխատանքներին: Արատահոսքի աղբյուր հանդիսացող ջրագիծը հայտնաբերվել և խցափակվել է:



Արդյունքում շահագործումից հանվել է D=300մմ, L=975մ խողովակաշար:

● Գյումրի քաղաքի Օզանյան փողոցում ՎԶԵԲ ֆինասավորմամբ իրականացվող փողոցաշինական ծրագրի շրջանակներում Շիրակ տեղամասի և գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից կատարվել են նոր կառուցվելիք փողոցի հին մասացած ջրագծերի հայտնաբերման և անջատման աշխատանքներ:



Արդյունքում շահագործումից հանվել են D=500մմ, L=100մ և D=50մմ, L=260մ ջրագծեր:



● Գյումրի քաղաքի Ն.Շնորհալի փողոցում ջրագծի վթար վերացնելիս Շիրակ տեղամասի և Գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից ուսումնասիրության է ենթարկվել Թամանյան փողոցով իջնող D=300մմ թուջե գործող ջրագիծը՝ դրանից առկա հին ջրագծերի հայտնաբերման և անջատման ուղղությամբ: Արդյունքում հայտնաբերվել և շահագործումից հանվել են D=100մմ L=447մ, D=100մմ L=320մ թուջե և D=50մմ L=360մ պողպատե ջրագծեր՝ տնտեսելով 2-3 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Երևան

● Շենգավիթ վարչական շրջանի ողջ համակարգում դիտարկվում էր ջրի ճնշման անբավարարություն: 2020 թ. շահագործված նորակառույց ջերմոցային տնտեսության ջրամիացումն իրականացվել էր Նորագավիթ թաղամասի ջրագծից, որի ջրամատակարարումն իրականացվում էր կիսափակ փականի միջոցով: Քանի որ ջերմոցների ջրօգտագործումն իրականացվում էր անկանոն ռեժիմով՝ մինչև Q=70լ/վ ջրաքանակով, անհրաժեշտություն էր առաջացել Նորագավիթ թաղամասի ցանցում ապահովել ավելցուկային ճնշում՝ բնակա-

նոն ջրամատակարարումը չխաթարելու համար: Ավելցուկային ճնշումներ էին դիտարկվում նաև վարչական շրջանի ողջ տարածքում գիշերային ժամերին՝ հակառակ ցերեկային ժամերի անբավարարության: Հարավ ՇՏ-ի աշխատակիցների հետ բազմաթիվ քննարկումների և ուսումնասիրությունների արդյունքում Նորագավիթ թաղամասի ջրագծի վրա տեղադրվել է նոր $D=400$ մմ ՃԿՓ, ինչի արդյունքում նվազեցվել են Նորագավիթի ավելցուկային ճնշումները, վերականգնվել են Նորագավիթի և Ողջ վարչական շրջանի համակարգի միջանկյալ միացումներով կապերը: Այսպիսով, ցերեկային ժամերին հնարավոր եղավ բարելավել ողջ վարչական շրջանի ջրամատակարարման համակարգի ճնշումները, իսկ Նորագավիթի ջրամատակարարումը Խարբերդի ՕԿՁ-ից տեղափոխել Արարատյան ՕԿՁ, նաև հնարավորություն ընձեռվեց նվազեցնել ողջ համակարգի գիշերային ավելցուկային ճնշումները: Արդյունքում կարողացանք իրականացնել բավարար ճնշումներով բնականոն ջրամատակարարում և տնտեսել ջրաքանակ:





Գյուղ Արամուս

● Արամուս համայնքի ջրամատակարարումն իրականացվում է պոմպի միջոցով, իսկ համայնքի դիրքով ավելի բարձր երեք փողոցների մոտ 50 բաժանորդներին՝ առանձնացված երկրորդ աստիճանի բարձրացման պոմպով՝ օրական 6 ժամյա գրաֆիկով: Պոմպի միացման ժամերին գյուղի ողջ համակարգում դիտարկվում էր ջրի անջատում՝ խաթարելով ողջ ջրամատակարարման համակարգը և առաջացնելով հիդրավիլիկ հարվածներ: «Հյուսիս» ՇՏ-ի աշխատակիցների հետ քննարկման արդյունքում որոշվել է 50 բաժանորդի մատակարարող պոմպի աշխատանքային ռեժիմը փոխարինել 24-ժամյա: Արդյունքում հնարավոր եղավ ավելի քիչ ջրով, ավելի ցածր ճնշումով իրականացնել 24-ժամյա ջրամատակարարում՝ նաև չխաթարելով ողջ գյուղի ջրամատակարարումը: Հնարավոր եղավ նաև նվազեցնել մեծ՝ առաջին աստիճանի բարձրացման պոմպի էլքը, ինչն իր հերթին բերեց ջրաքանակի և էլ. էներգիայի տնտեսման:


Քաղաք Սևան

● Սևան քաղաքի Նաիրյան փողոցում իրականացված վթարավորոնողական աշխատանքների արդյունքում նույն փողոցով անցնող 200մմ տրամագծով թուջե խողովակից միացված 150մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել է 4լ/վ քանակությամբ վթար: 150մմ պողպատե ջրագիծը 50մմ պեթ խողովակով փոխարինելուց հետո տնտեսվել է ≈ 3 լ/վ քանակությամբ ջուր: Վթարը վերացնելուց հետո Նաիրյան և Աբովյան փողոցների խաչմերուկում գտնվող դիտահորի մեջ տեղադրելով 24-ժամյա ծախսաչափ արձանագրվել է վերոհիշյալ 3լ/վ քանակությամբ տնտեսումը, ինչպես նաև ևս մեկ անգամ համոզվեցինք, որ նույն ջրագծի վրա կան այլ վթարներ: Վթարաորոնողական աշխատանքները կշարունակվեն:





Սևան քաղաքի 5-րդ միկրոթաղամասի մուտքագծի վրա ևս տեղադրվել է 24-ժամյա ծախսաչափ, որի չափման արդյունքը ներկայացվում է ստորև.



Սևան ՔԿՀ-ի ջրագծի (d=150մմ պողպատ) վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքում իրենց ջրաչափական հանգույցում հայտնաբերվել է ջրաչափը շրջանցող միացում (d=75մմ), որով անցնում է 3լ/վ ջրաքանակ: Շրջանցող ջրագիծը ապամոնիտավել է և կազմվել է համապատասխան ակտ:



Գյուղ Լճաշեն

● Լճաշեն գյուղի մուտքագծի վրա տեղադրվել է ՃԿՓ, ինչի արդյունքում զգալիորեն նվազեցվել է համակարգում ավելցուկային ճնշումը և տնտեսվել է 3լ/վ ջրաքանակ՝ նվազեցնելով նաև վթարների առաջացման հավանականությունը:




Քաղաք Դիլիջան

● Դիլիջան քաղաքում կատարված վթարավորոնողական աշխատանքների արդյունքում Կալինինի փողոցի վրա հայտնաբերվել է 2 վթար՝ ընդհանուր 10լ/վ ջրաքանակի կորուստով:

Քաղաք Սևան


● Սևան քաղաքի Նաիրյան 176 շենքի բակում իրականացրած աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթարված ջրագիծ՝ շենքի մուտքերից մեկը սնուցող, որի հետևանքով ջուրը լցվում էր կոյուղու դիտահորի մեջ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է 2,5 լ/վ ջրաքանակ:

● Սևան քաղաքի միկրոթաղամասերում շուրջօրյա ջրամատակարարման հնարավորությունն ուսումնասիրելու համար «Գոմաձոր» ՕԿՁ-ից սնուցվող դիրքով ամենաբարձր շենքի մուտքագծում տեղադրվել է ճնշման լոգեր:






Գյուղ Չկայովկա

● Չկայովկա գյուղում գիշերային ծախսաչափի տեղադրելուց և ուսումնասիրություններ կատարելուց հետո հայտնաբերվել է 5լ/վ քանակությամբ վթար:



Չկայովկա գյուղում տեղադրված գիշերային ծախսաչափերի օգնությամբ հնարավոր եղավ հայտնաբերել թվով 2 վթար, որոնց վերացման արդյունքում տնտեսվել է 8լ/վ քանակությամբ ջուր:

Ներկայացնում ենք Երևան քաղաքի թվով չորս տարբեր հատվածներում ջրագծերի վրա տեղադրված գիշերային ծախսաչափերի ֆիքսած տվյալները, որոնք մանրամասն ուսումնասիրվում են, ինչպես նաև իրականացվում են վթարաորոնողական աշխատանքներ:



ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաշվետու ամսին, նախորդի՝ հունիսի նման, հաշվի առնելով շոգ եղանակներով պայմանավորված լարվածությունը ջրամատակարարման գործում, Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/ զբաղված է եղել մոտ 26 հազար հետևորդ ունեցող և հանրության հետ փաստորեն ամենակարևոր հաղորդակցության կապուղի հանդիսացող Ֆեյսբուք սոցիալական ցանցի Veolia Armenia էջի միջոցով սպառողների տեղեկատվական սպասարկմամբ:

Ստացվող դիմումներին, ընկերության մյուս ծառայությունների հետ համագործակցությամբ, պատասխան է տրվել օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, փորձ է արել ներկայացված խնդիրները լուծել հրնթացս թույլ չտալու համար սպառողների դժգոհություններ, իսկ առավել բարդ և լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող խնդիրները անմիջապես ներկայացվել են Վեոլիա Ջուր ՓԲԸ համապատասխան ծառայություններին:

Աշխատանքն իրականացվել է 24/7 ռեժիմով, սպասարկելով օրական մի քանի տասնյակ դիմում, որոնց հիմնական մասը հուլիսին վերաբերել են ջրամատակարարմանը և ջրահեռացմանը:

Իր հերթին, օգտագործելով տվյալ կապուղին, ՀԿԲ-ն շարունակաբար հանրությանն է ներկայացրել ընկերության աշխատանքը: Veolia Armenia էջի այցելուները շարունակաբար տեղեկացվել են ողջ հանրապետության տարածքում իրականացվող ծրագրերի և դրանց արդյունքների մասին: Դա վերաբերում է թե՛

վթարների վերացմանը և թե՛ նոր ջրագծերի ու կոյուղագծերի կառուցմանն ու համակարգի մյուս ինժեներական ենթակառուցվածքների զարգացմանը:

Ընդ որում, այս առումով շատ զգալի է հանրային կապերի զարգացման համար ներգրավված <Մետրիկա> Խորհրդատվական ընկերության ներդրումը Վեոլիա Ջուր ՓԲԸ գործունեության լուսաբանման գործում:

Խորհրդատուի կողմից լայնորեն կիրառվել են համակարգում տարվող աշխատանքների ներկայացման նոր, ժամանակակից ձևեր, որոնք թույլ են տվել ավելի ցայտուն դարձնել ձեռքբերումները, հաղթահարվող դժվարությունները, ցույց տալ Օպերատորի առջև կանգնած խնդիրների բարդությունը և դրանց լուծման ուղղությամբ առաջընթացը:

Առաջին հերթին խոսքը ինֆոգրաֆիկայի լայն կիրառության մասին է: Այդ, ծավալով փոքր, հետևաբար, ընթերցողի ընկալման համար մատչելի, բայց բովանդակալից հաղորդագրությունները շատ տպավորիչ են ու հիշվող: Նաև կիրառվել է GIF, Hashtag, տեսանյութ ու այլ արտահայտչական միջոցներ: Եթե հրապարակումներ կրել են խորագիր, օրինակ՝ <Մեր հերոսները>: Իսկ շարունակվող հրապարակումների պարագայում դրանք ակնհայտորեն նպաստել են հանրության մոտ ընկերության դրական կերպարի ձևավորմանը:

Նաև հարկ է նշել <Մետրիկա> շարունակաբար անդրադարձը ողջ Վեոլիա Գրուփի գործունեության լուսաբանմանը, որի հաջողությունները աշխարհի շատ երկրներում և աշխատանքի բոլոր երեք ուղղություններով, հայաստանյան կոչված են եղել հասարակությանը համոզվածություն հաղորդել, որ Վեոլիա Ջուր ՓԲԸ-ն նույնպես հաջողությամբ կկատարի ստանձնած պարտավորությունները:

Ընդհանուր առմամբ խոսքը 63 հրապարակման մասին է:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԿԲ-ն շարունակել է սպասարկել ընկերության veolia.am պաշտոնական կայքը: Այնտեղ մշտապես տեղադրվել է հրապարակման համար պարտադիր տեղեկատվությունը, իսկ ընթացիկ հրապարակումները թարմացվել են ըստ անհրաժեշտության: Այս առումով հատկապես կարևոր է ջրանջատումների մասին սպառողների իրազեկումը սահմանված ժամկետներում: Բոլոր հայտարարությունները եթեր են հեռարձակվել համապատասխան հեռուստատվիքներով, հրապարակվել են մեր կայքում ու ֆեյսբուքյան էջում, ուղարկվել են մոտ 40 այլ լրատվամիջոցի, ինչպես նաև կառավարման պատկան մարմիններին:

Նաև ծառայությունների մատակարարման մրցույթների հրավերներ, աշխատանքային թափուր տեղեր, բաժանորդների սպասարկման գրասենյակների գործունեություն, պատասխան ՁԼՄ-ներից ստացվող հարցումների... Ընկերությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ հաղորդագրությունները հուլիսին հասել են հանրությանը սահմանված ժամկետներում և համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ին ներկայացվող պահանջների:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● ՈԱԱ ծառայությունը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 248-րդ հոդվածի և Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Մտանդարտների պահանջներով, մշակեց և Ընկերության գլխավոր տնօրենի 16.07.2020թ. N 46 Լ հրամանով գործողության մեջ դրեց «Ավտոնորդող փականագործի անվտանգության պահանջներ հրահանգը»:

● ՈԱԱ ծառայությունը, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 21 ապրիլի 2011թ. N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջներով և «Ճնշման տակ աշխատող անոթների տեխվկայագրմանը ներկայացվող պահանջներ» ստանդարտով, մշակեց քլորի բալոնների և քլորի կոնտեյներների տեխվկայագրման առաջադրանքները:



5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ծառայությունը, յուրաքանչյուր աշխատանքային օր Ընկերությունում՝ COVID-19 համավարակի կանխարգելման և Ընկերության ընթացիք աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն փոխանցեց էլեկտրոնային գրությամբ ՀՀ Ջրային կոմիտե:

● Ջուզահեռ այս գործընթացին, ՈԱԱ Ծառայությունը Ընկերության Ղեկավար կազմին և ստորաբաժանու մասերի պատասխանատուներին իրազեկեց Պարետի ընդունած որոշումների վերաբերյալ:

● ՈԱԱ Ծառայությունը ՄՌՄ բաժնի հետ համատեղ օպերատիվ կերպով Ընկերությունում COVID-19-ով վարակված կամ կոնտակտավոր աշխատողների մասին համապատասխան տեղեկատվությունը տրամադրեց ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներին:


● ՈԱԱ Ծառայությունը, ելնելով Պարետի 2020թ. մայիսի 3-ի N 63 որոշմամբ սահմանված համապատասխան անվտանգության կանոնների ապահովման պահանջների գնահատման նպատակով, շարունակեց ստուգայցներ իրականացնել Ընկերության թվով 15 գրասենյակներում:

● Ինչպես նաև ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանու մասերից ծառայությանն ներկայացվեցին կառուցվածքային ստորաբաժանու մասերի անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:

● Ծառայությունը կազմակերպեց Ընկերության գրասենյակների մոտ 2500 քմ մակերեսի լրացուցիչ ախտահանման աշխատանքները:

● Ընկերությունը, ելնելով աշխատողների շրջանում COVID-19 համավարակի տարածման կանխարգելման անհրաժեշտությունից, շարունակեց կազմակերպել Էկոսենս բժշկական լաբորատորիաների կողմից թվով 138 աշխատողի ՊՇՌ թեստավորման աշխատանքները: Աշխատողների մասնակցությունը ՊՇՌ թեստավորմանը եղել է բացառապես վերջիններիս համաձայնությամբ:

Տրամադրված անհատական պաշտպանության միջոցներ և պոստերներ /մարտ-հունիս





5.3. ԲՈՒԺԶՆՆՈՒՄ


● Ծառայությունը, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2003թ. մարտի 27-ի N 347-Ն որոշմամբ, «ԲԻՈՄԵԴ» կլինիկական ախտորոշման կենտրոնի հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց Ընկերության թվով 247 աշխատակցի մանրէակրության/որդակրության բժշկական հետազոտության աշխատանքների և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների վարման գործընթացի առաջին փուլը:

5.4. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

● Հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները՝ ՈԱԱ Ծառայությունը կազմակերպեց և իրականացրեց Ընկերության ԶՄԳՍ և ՔՄԿ ծառայությունների թվով 44 աշխատակցի համար «Քլորի օպերատորների մասնագիտական որակավորման հեռավար դասընթաց/գիտելիքների ստուգում», թվով 2 աշխատակցի՝ «Քլոր տեղափոխող մեքենայի վարորդի մասնագիտական որակավորման հեռավար դասընթաց/գիտելիքների ստուգում», թվով 5 աշխատակցի՝ «Քլորակայանի զննման և սարքին վիճակի պատասխանատուների մասնագիտական որակավորման հեռավար դասընթաց/գիտելիքների ստուգում» և 1 աշխատակցի՝ «ԱՎՕ-ի զննման, վերահսկման և սպասարկող անձնակազմի հրահանգավորման գծով պատասխանատու անձի մասնագիտական որակավորման հեռավար դասընթաց/գիտելիքների ստուգում»:




2019-2020թթ. կազմակերպված դասընթացների/թեստավորումների (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



5.5. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՅՑՆԵՐ

● Ծառայությունը իրականացրեց Անվտանգության ստուգայցներ Ընկերության թվով 1 ՀՏԿ-ում և 15 ստորաբաժանումում: Ստուգայցների նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում, ինչպես նաև կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

2020 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Համակարգչային ցանց

Հուլիս ամսվա ընթացքում համակարգչային մասնագետների կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝

- Բացվել են նոր օգտատերեր և ստեղծվել են նոր օգտատերերի դերեր՝ “IUCConnect” զանգերի կառավարման համակարգում:
- Մեկնարկել է SS անվտանգության աուդիտի համար փաստաթղթերի հավաքագրում
- Մեկնարկել է Compliance Tool ծրագրային փաթեթի տեղադրում՝ կազմակերպության բոլոր սերվերների և համակարգիչների վրա
- Նախագծվել և մոնտաժվել են համակարգչային, հեռախոսային, տեսահսկման ենթակառուցվածքների ցանցեր՝ Էրեբունու 5 նոր հասցեում:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Հուլիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Միջաբեռնարմացումներ և փոփոխություններ են կատարվել ինտերակտիվ և փաստաթղթաշրջանառություն ծրագրերում:
- Նախագծվում է նոր համակարգային փոփոխություններ տեխնոլոգիաների գործընթացում՝ բաժանորդների սպասարկման որակը բարելավելու ուղղությամբ:
- Կատարվել են թարմացումներ՝ 1-85 զանգերի կենտրոնի նոր ծրագրային ներդրման աշխատանքների հետ կապված:
- Ակտեր

Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հուլիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Տեղամաս	Խախտման արձանագրություն		
	քանակ	հազ. լս/մ	մլն. դրամ
Հյուսիս	5	3.9	0.7
Էրեբունի	7	2.5	0.4
Շենգավիթ	27	13.9	2.4
Կենտրոն	7	4.4	0.8
Սրաքկիր	5	2.0	0.3
Մաշտոց	15	8.2	1.3
Շահումյան	4	0.6	0.1
Քանաքեռ-Զեյթուն	2	0.5	0.1
ՋԿԲ	49	52.4	9.1
Ծիրակ	3	0.9	0.2
Սրթիկ	22	6.9	1.2
Սրարատ	8	0.7	0.1
Սբովյան	4	0.8	0.1
Հրազդան	8	2.1	0.4
Սլավերոյի	1	0.5	0.1
Սրտաշատ	13	1.9	0.3
Բերդ	2	0.3	0.1
Գավառ	14	5.2	0.8
Գորիս	16	5.8	0.9
Եղեգնաձոր	1	0.5	0.1
Էջմիածին	14	10.2	1.8
Թալին	3	0.9	0.2
Կապան	10	3.9	0.6
Ճամբարակ	1	0.1	0.0
Մասիս	3	1.2	0.2
Մեղրի	1	0.5	0.1
Նոյեմբերյան	3	1.5	0.2
Սրմավիր	8	4.3	0.7
Վայք	2	1.8	0.3
Մշտարակ	11	1.9	0.3
Զարենցավան	2	0.4	0.1
Սիսիան	1	0.5	0.1
Սպիտակ	7	1.2	0.2
Ստեփանավան	1	1.2	0.2
Տաշիր	2	1.0	0.2
Ընդամենը	282	144.7	24.4

Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)

Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հուլիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Մնասրբություն	
	քանակ	հազ. հ/մ	քանակ	հազ. հ/մ
Հոսախ	7	5.35	32	0.40
Էրեբունի	1	3.66	10	0.02
Շենգավիթ		-	5	0.07
Կենտրոն	10	7.36	51	0.39
Սրաբկիր		-	18	0.10
Մաշտոց	2	0.34	8	3.56
Շահումյան	2	1.03	7	0.11
Քանաքեռ-Զեյթուն		-	11	0.77
Լոռի	4	3.73	46	0.28
Շիրակ	9	1.77	34	0.28
Սրբիկ	10	4.19	26	0.13
Սրարատ		-	1	0.00
Աբովյան	4	0.46		-
Հրազդան	80	22.99	65	0.32
Սլավերդի	9	2.15	27	0.17
Աշոցք	6	2.58	70	0.39
Սրտաշատ	10	2.92	121	0.81
Բերդ	2	0.43	13	0.05
Գավառ	2	0.75	40	0.27
Գորիս	18	9.02	31	0.18
Դիլիջան		-	2	0.03
Եղեգնաձոր	3	1.29	36	0.26
Էջմիածին	37	14.92	65	1.03
Թալին	4	95.18	2	0.19
Իջևան	1	0.15	12	0.07
Կապան		-	15	0.36
Ճամբարակ		-	3	0.02
Մասիս	14	7.27	14	0.15
Մեղրի	5	2.58	5	0.04
Նոյեմբերյան	5	2.58	18	0.09
Սրմավիր	11	4.38	82	2.08
Ջերմուկ		-	2	0.01
Վայք	2	0.52	9	0.03
Աշտարակ	4	1.29	28	0.61
Չարենցավան	25	10.75	68	0.27
Սիսիան	3	2.25		-
Սպիտակ	5	0.56	35	0.15
Ստեփանավան	3	1.55	9	0.30
Տաշիր		-	10	0.12
Ընդամենը	298	213.99	1031	14.11



«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am